№ 165 Նոյեմբերի 1 Երեքշաբթի 1883 Նոյեմբերի 1 Երեքշաբթի № 165

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆրինկո Բալաբան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

25 հոկտեմբերի

Անցեալ տարի մի քանի անգամ խօսվեցաւ և լրագրներում նոյնպէս գրվեցաւ, որ Թիֆլիսի «Հայոց Բարեգործական ընկերութեան» մասնաճիւղը այստեղ հաստատելու մտադրութիւն կար. այս, այն ժամանակը համարեա չատերի խօսակցութեան նիւթն էր այդ հարցը, իսկ հետևանքը մնաց լոկ մտադրութիւն։ Գուցէ լինէ պատասխանեն, որ առևտրի նահանջ և անմախանձելի վիճակը յետ կանգնեցնել տուեց այդ մտադրութիւնից. բայց միթէ բոլորովին մարած է կարեկցութեան պարտաճանաչութիւնը մեզանում,—երբէք։ Անարդարութիւնը նրանումն է, որ ճարպիկ ազգատը զրաւում է մեզանից և իր ամաչող պարկեշտ պաշտօնակցի բաժինը. և ահա մի ազգատ կարծածի հանդերձներից կամ տան անկիւնից հարիւրաւոր բուբլիներ դուրս կը գան, իսկ միւսը համեստութիւնից թէ ամօթից տանը ընկած «գործել ոչ կարէ, մուրալ ամաչէ», նրա բազմամարդ ընտանիքը, աչխատաւորից զրկված, մերկ, բոլիկ տանը նստած, հիւանդ և անդամալոյծ երեխաներով շրջապատված, անյայտ է մնացել մարդասէր դացւոյ գթութիւնից, և այնպիսին էլ արդարև միշտ զուրկ է մնում մեր առատաձեռնութիւնից։ Ոչինչ օրինաւորապէս գործելու համար, մեզ հարկաւոր է անպատճառ «Բարեգործական ընկերութեան» մասնաճիւղ ունենալ, կամ «ազգատաց հոգաբարձութիւն» անունով մի պաշտօնական հիմնարկութիւն հաստատել Ախալցխայում։

Քաղաքային բժշկի հարցը նոյնպէս նոր չէ արծարծված մեզանում. Ախալցխայի համար անհրաժեշտ է քաղաքային բժիշկ ունենալ, որը զիտենար տեղական լեզուները և մատչելի լինէր ստորին դասակարգի համար. մեր քաղաքում կան բժիշկներ,—զինուորական հիւանդանոցի, զօրքի համար նոյնպէս և դաւառական բժիշկ. դրանք էլ իրանց հերթում օգտակար են, բայց մենք աչքի առաջ ունենալով խեղճերը, որոնք քաղաքացւոց մեծամասնութիւնն են կազմում, և այցելեմբար տալու անկարող են, երկրորդ չը հասկանալով բժշկի լեզուից և փոխադարձաբար, չատ անգամ միմիկայով խօսելով մէկզմէկու հետ, բարերարդ հետևանքին չը հասնելից զատ, երբեմն պատահում է հակառակը հիւանդի հետ.... Դաւառական բժիշկ պ. Գամրակելին մի չատ ազնիւ և խղճմտաւոր անձնաւորութիւն է. նրա համար դոնեա լսված չէ, որ մէկի այցելութիւնը բացասած լինի, բայց դժբաղդաբար նա էլ նախ հայերէն լեզուին բոլորովին անծանօթ է, երկրորդ, իբրև դաւառական բժիշկ իր ծառայութիւնը գլխաւորապէս բաժանված է սահմանի մէջ այցելելում։

Քաղաքի մաքրութեան համար, գլխաւորապէս Մարտաչայ ասված ձորակի մասին կրկնելու եմ, և հրաւիրում եմ ոստիկանութեան և քաղաքային վարչութեան ուշադրութիւնը. ոչ մի տեղ տեսնված չէ այդպիսի աղտեղութեանց տիպարը քաղաքի հէնց ամենամարդաչատ և առաջին փողոցների կողքին։ Եթէ Եդիպտոսի խօլերան բարեբաղդաբար մեզ մօտ հիւր չեկաւ, դժուար չէ երևակայել, որ նրա մի աչքը կոյր է եղած, և ինչ էք կարծում, յուլիս և օգոստոս ամիսներին կարող էր մեզանում առատ հունձ ունենալ։ Ոստի բարերարութիւն արած կը լինեն ամբողջ ազգաբնակութեանը, եթէ մաքրութեան հսկողութիւն լինի այդ ձորակի վրա, և դրա համար ամենահարկաւոր են,—առաջին, նոր արտաքնոցներ չինել նոր սպանդանոցի մօտերը. երկրորդ անապին արտաքնոցների խողովակները զոցել, որոնք ուղղված են այդ ձորակի վրա. երրորդ, փողոցների անկիւնները տախտակով պատել, կամրջների տակը մնելու մուրքը զոցելու համար, և չորրորդ, հրամայել պայտարների և ուրիշների աղբերը տանել գետը լեցնելու, հակառակողին ենթարկելով դատաստանական պատժի։

Տեղւոյս դրաչէտ մասը ոգևորված էր «Մշակի» մէջ տպված «Հայկունու կրիտիկան և «կայծերը» յօդուածը կարդալով. բաւական է ասել որ պ. Փաստոսին կենաց բաժակներ անգամ պարպվեցան ընտանեկան երեկոյթներում։ Ժամանակակից երեւելի հայ վիպասան և բանաստեղծ պ. Բաֆֆիի հայ-դրականական ասպարիզում մատուցած ծառայութեան համար, նրա քսան և հինգ ամեակը յարգելու նպատակով պատրաստվում են տօնելու և այդ առաջարկութիւնը համակրութեամբ ընդունվեցաւ ամեն դասակարգից. ստորագրութեամբ հաւաքված գումարով մտադիր են պատշաճաւոր ընծայ մը մատուցանելու. մասնակցողները սրբազան պարտք են համարում այդ ազնիւ և ժիր մշակը յարգելու։

Սեպտեմբերից այստեղ բացվեց հայ ուսումնարանաց հովանաւորութեամբ մեծ. օր. Ազնաւուրեանցի «Մանկական պարտէզը». այդ «պարտէզը» անդրանիկն է Ախալցխայի մէջ. յուսալի է, որ հետևողներ կը լինեն դրա օրինակին։

Գոհ է հասարակութիւնը առհասարակ ուսումնարանաց հոգաբարձութիւնից, եթէ ուսուցիչների ընտրութեանց համար տարածված լուրերը ստոյգ լինէին. այդ դժգոհութեանց սկզբնապատճառը թեմական վերատեսուչ պ. Աղայեանցն են համարում, որ ուշացրեց իր այցելութիւնը Ախալցխային և հետևաբար ուսուցիչների չատներ կազմելը դանձնել էր հոգարարձութեանը։ Կենսական պիտոյքները արժան են և բաւարար, օդը հանդարտ և պարզ. առևտրի հանգստութիւն. քաղաքում տիրում է անդորրութիւն և ապահովութիւն. վարակիչ հիւանդութիւններ չը կան։

Աւ. Աս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 28 հոկտեմբերի

Հալաբարի Ս. Մարիամեան հայ օրիորդաց ուսումնարանի Հոգաբարձական խնամակալական վարչութիւնը պարտք է համարում հրատարակել ի գիտութիւն հասարակութեան ուսումնարանի հետևեալ հաշիւը 188²/₃ թուականի։—

Ա. Ուսումնարանը առ 1-ն Սեպտեմբերի 1882 թ. ունէր պարտք, 936 ր. 92 կ. և ապառիկ 914 ր. Ցընթացս 188²/₃ տարուայ ուսումնարանի ընդհանուր մուտքն էր՝ 2159 ր. 90 կ. ծախքը 2144 ր. 99 կ. այնպէս որ առ 1-ն սեպ. 1883 թ. առձեռն դրամ ուսումնարանը ունէր, 14 ր. 99.։

Բ. Ուսումնարանի 936 ր. 92 կ. հին պարտքից 188²/₃ տարում վճարվեցաւ, 525 ր. բացի սորանից 200 ր. ևս թեմ. վերատեսչի կարգադրութեամբ վերացվեցաւ, այնպէս որ հին պարտք մնաց, 211—92 կ.։ Ցընթացս 188²/₃ տարուայ նոր պարտք գոյացաւ 260 ր. ուրեմն ընդամենը առ 1-ն սեպտեմբերի 1883 թ. ուսումնարանը ունէր պարտք, 471 ր. 92 կ։

Գ. Վերոյիշեալ 914 ր. ապառիկներից ուսումնարանը ստացաւ՝ 136 ր., մնաց ապառիկ՝ 778 ր. յընթացս 188²/₃ տարուայ աւելացաւ. դարձեալ ապառիկ՝ 80 ր։—

Դ. Առ 1-ն սեպ. 1883 թ. ուսումնարանը ունէր պարտք 471 ր. 92 կ. ապառիկ՝ 858 ր. առձեռն դրամ, 14 ր. 99 կ.։

Ուսումնարանի վարչութիւնը յայտնում է իր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԻՆԿՈ ԲԱԼԱԲԱՆ

—

—Ցեանում էք, պարոն, նորից սկսեց ծերունին,—ես այսպէս եմ մտածում իմ մասին. դու, եղբայր, բաւական տխրութիւն կրեցիր քո հարիւրամայ կեանքում, չէ որ պէտք է վերջ դրվի դրան։ Բայց այդ միջոցին յանկարծ յաւիտենական կեանքն ես մտաբերում։ Դիցուք թէ, պարոններ, բոլորը այնպէս է, որպէս խօսվում է ապագայ երանութիւնների մասին։ Լաւ։ Ահա, օրինակ, Ս. Սեբաստիանը կը պատմէ ինձ, թէ ինչպէս թիւրքերը արձակում էին նրա վրա իրանց նետերը, թէ ինչպէս բուի նման դամեցին նրան, և, այսու ամենայնիւ, ինչպէս նա գնաց կռապաշտ թագաւորի առջև և ասաց նրան. քո մէջ չան արիւն կայ.—կը պատմէ նա, թէ ինչպէս դրանից յետոյ Նրան բոլորովին սպանեցին։ Յետոյ Պոլիկարպոս եպիսկոպոսը կը պատմէ ինձ, թէ որպիսի խելացի խրատներ էր տալիս նա մի ինչ-որ կռապաշտ Ֆելդ-մարշալի և ինչպէս դրա համար նրան խորովեցին խարոյկի վրա։ Եւ, վերջապէս, Ս. Սեբաստիանը հազար անգամ կը պատմէ նետերի մասին, իսկ Ս. Վիկենտիոսը ապակու սուր բեկորների մասին,—բայց, ախար այդ ինչ բաներ են, ուելացրէք դրանց վրա և անքնութիւնը,—ամենին չը գիտենալ, թէ ինչ է բարերար քունը։ Չէ որ երբ քնում ես, գոնէ կարճ ժամանակով մեռնում ես։ Այստեղ, այս աշխարհում, եթէ չես քնում, գոնէ որքան կամենում ես, յօրանջում ես, բայց ով գիտէ, կարող են արդեօք յօրանջել երանելի հոգիները։

—Դուք դեռ ես շատ առոյգ էք,—ասեցի ես ծերունուն,—երևի մտածում էք ուելի ես ապրել քան թէ հարիւր տարի։

—Այո, ցաւելով մտածում եմ, որ կապրեմ։ Երբ որ ամբողջ հարիւր տարի նայում ես կեանքի վրա և տեսնում ես, թէ ինչպէս է կատարվում ամեն ինչ, այդ ժամանակ, ճշմարիտ, ուելի ուրախ կը լինիս միանգամից վերջացնել կեանքի հետ, միանգամից, մշտապէս։ Որքան կը ցանկանայի երկար քնել, երկար, այսինքն միւս անգամ չը զարթնել։

Նա դարձեալ խորասուզվեցաւ մտածութիւնների մէջ և մեքենաբար օրօրում էր իր բարձը։

—Երկնքի հետ, պարոն, հանաք անել չի լինի,—դարձեալ սկսեց նա։

—Միթէ դուք հաւատում էք յաւիտենական կեանքին,—կամաց հարցրեց Բալաբանը. այդ միջոցին նրա ձայնը դողդողում էր ուելի սաստիկ սովորականից։

Ես ոչինչ չեմ հերքում,—պատասխանեց Կօլանկօն,—սուրը գիրքը գրել է ինքը Աստուածը, և այդ պատճառով ես չեմ կարող բացատրել բոլորը այնպէս, որպէս ես կը ցանկանայի։ Բայց ես այն համոզմունքին եմ հասել, որ մարդու համար ամենից լաւն այն է, որ աշխատէ ուրախ սրտով։ Մարդու նշանակութիւնը աշխատանքն է, և որպէս ես, այնպէս էլ ուրիշ ոչ ոք, չէ կարող որոշ կերպով ասել նրան, թէ ինչ կը լինի նրա մահից յետոյ։

—Դուք իրաւ էք ասում, ոչինչ չէ կարող լինել աշխատանքից բարձր, աշխատանքից և ուրախ սրտից,—ձայն տուեց Բալաբանը։—Բայց ամենից գերազանցն է իր պարտաւորութիւնը կատարելը։ Էլ ուրիշ ինչ պէտք է ցանկանանք մենք այդ աշխարհում։

Դեռ ես ես ուելի հետաքրքրվում էի ծերունիով, քան թէ Բալաբանով։

—Լսիր, բարեկամ,—դարձայ ես դէպի Կօլանկօն,—արդեօք դու կարողացայ լաւ հասկանալ քո առածները։ Դու ցանկանում ես մեռնել միանգամից և մշտնջենաւորապէս, բայց չես վախենում մահից։

—Ոչ, ոչ, պարոն,—խնդալով պատասխանեց նա,—ես սարսափելի կերպով վախենում եմ մահից։

—Ինչու այդպէս։

—Ահա ինչու. քանի որ ես կենդանի եմ, իմ մէջ դեռ կենդանի է և այն յոյսը, թէ մի օր կը հասնի իմ վախճանը, ճշմարիտ չէ։—Այդ խօսքերի միջոցին ես զգում էի, թէ նրա փոքրիկ աչքերը, կարծես, միվում էին իմ սրտի մէջ։—Իսկ երբ կը հասնի մահուան ժամը—և յանկարծ կը յայտնվի, որ ես դարձեալ կենդանի պիտի մնամ, այն ժամանակ յոյսին էլ վերջ կը տրվի։

Բոլոր շրջապատողները բարձր ձայնով ծիծաղեցին։

—Ես խնդրում եմ ձեզ, պարոն,—չուտով սկսեց խօսել ծերունին,—նայեցէք իմ վրա, ես հօ յուսահատութեան մէջ ընկած մարդ չեմ, ես հօ որ և իցէ իր կայքը վատնած կալուածատէր կամ փողոցային քաղցած գրագիր չեմ, բայց կեանքը ատելի է դարձել, զզուացրել է ինձ։ Դիտէք, որ այդ հետևանքին կը հասնի իւրաքանչիւր ոք, երբ նա նեղութիւն յանձն կառնի փոքր ինչ խորհել։ Երբ որ մարդիկ գոնում են մի ինքնասպան կամ իրան կախ տուած մարդու, այդ միջոցին նրանք զարմանում են և հարցնում են. ինչպէս էր նրա ապրուստը։—Ինչպէս։—Ախար նա ամենևին չէր ապրում։

Մի բոպէ բոլորը լուռ կացան։ Կրակը հանդարտ վառվում էր խարոյկի մէջ, և ծուխը ծոյլ կերպով բարձրանում էր դէպի թղատենիների անտառը։ Քամին բոլորովին դադարել էր։

Հարիւրամեայ ծերունին կողմնակի կերպով նայեց Բալաբանի վրա և կամաց ասաց ինձ.—նա այդ տեսակ մարդիկներից է։

Բալաբանը նստած էր գլուխը քարշ գցած, և լռում էր։

—Դէ, պատմիր մեզ որ և իցէ բան, Բալաբան,—ասաց Կօլանկօն։

—Պատմիր, բարեկամ,—խնդրեցի և ես։—Ասում են, որ դու լաւ պատմել գիտես։

Զինուորը տխուր կերպով ժպտաց։

—Ինչ էք հրամայում պատմել,—քաղաքավարութեամբ հարցրեց նա,—հեքեաթ, թէ մի ուրիշ բան։

—Ոչ, ես ուելի լաւ կը համարէի լսել մի պատմութիւն քո կեանքից։

Կօլանկօն հաւանութեամբ շարժեց գլուխը։

—Այո, նա ուելի քան թէ միւսները փորձանքների է հանդիպել,—ուելացրեց ծերունին։

Բալաբանը ձեռքով դանդաղ կերպով շօշափեց իր ճակատը։

—Ինչ էք կամենում, որ ես պատմեմ ձեզ։

Թղթէ մարդը պարզեց վիզը և դժգոհութեամբ փայլեցրեց նրա վրա իր աչքերը։

—Այն ինչ բանի վրա էր ակնարկում հրէան մի քանի բոպէ առաջ,—խօսեց նա։

—Ա՛խ, դա այնպիսի մի պատմութիւն է...—կամաց պատասխանեց Բալաբանը, և իսկոյն նրա դէմքը բոցավառվեցաւ, և խաղաղ, անբացատրելի, սրտաշարժ տխրութիւնը պատեց նրա ամբողջ երեսը։

—Պատմութիւն,—ագահութեամբ հարցրեց Կօլանկօն։

—Այո, պատմութիւն, որի նմանը շատ չէ պատահում այս աշխարհում,—միմնջաց զինուորը։

—Այսպէս,—ասաց ծերունին։

—Ոչ ամեն պատմութիւնները զուարճալի են։

խորին հրապարակական չնորհակալութիւնը այն հիմնարկութիւններին և ազնիւ անձինքներին, որոնք թէ միանուագ և թէ տարեկան անդամական նուէրներով նպաստեցին ուսումնարանին:

Նախագահ Բժ. Նաւասարդեանց, խնամակալներ՝ Միք. Սալամբէգեանց, Գ. Սունդուկեանց, Հոգաբարձուք՝ Գր. Մկրտումեան, Գ. Ցակոբեան, Յար. Ցէր-Ղևոնդեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս տարի շատ վաղ է սկսվել «Մշակի» բաժանորդագրութիւնը առաջիկայ 1884 թուի համար: Արդէն հոկտեմբերի վերջին օրերում սկսեցինք ստանալ բաժանորդագիրները:

—

Ուղարկում ենք մեր բաժանորդներին տպված ծրարներ և տպված նամակներ, բաժանորդագրութեան համար:

—

Մի քանի երիտասարդներ թէ բերանացի և թէ գրաւոր կերպով դիմում են մեզ հարցնելով՝ արդեօք ճշմարիտ է որ յունվար ամսին եկող 1884 թուի, կը կատարվի մեր հեղինակ պ. Րաֆֆիի գործունէութեան քսան և հինգ ամեայ յօբելեանը: Մենք այդ հարցմունքներին ոչինչ որոշ չենք կարող պատասխանել, մենք լսեցինք միայն, որ հեղինակի տաղանդը պաշտող երիտասարդների մի խումբ դիտաւորութիւն ունի կատարել պ. Րաֆֆիի յօբելեանը, բայց ինչ ձևով, երբ և որտեղ,—այդ մեզ բոլորովին անյայտ է:

—

Այս օրերս Թիֆլիսի Կրուժոկ ասված կլուբի անդամները տուեցին մի ներկայացում ռուսերէն լեզուով երևելի ռուս հեղինակ Օստրովսկու ներկայութեամբ և ի պատիւ նրան: Խաղացին Օստրովսկու «Не въ свои сани не садись» կոմեդիան: Հասարակութիւնը շատ ծափահարեց թէ հեղինակին և թէ խաղացողներին, իսկ ներկայացումից յետոյ թանգագին հիւրին ընթրիք առաջարկվեցաւ նոյն իսկ Կրուժոկի դահլիճներից մինում: Սեղանին նստած էին մօտ 200 անձինք: Ասվեցան ճառեր և տոստեր խմվեցան հուշկաւոր բեմական գրողի կենացը: Օստրովսկի շատ զգացված ձայնով չնորհակալութիւն էր յայտնում:

—

Թիֆլիսի հայոց լրագիրները հաղորդում են, որ տեղապահ, սրբազան Մակար արքեպիսկոպոսը հոկտեմբերի 23-ին Բէսարաբիայից գալով, հասաւ Թիֆլիս և սովորական պաշտօնական այցելութիւնները տալուց և ընդունելուց յետոյ, հոկտեմբերի 27-ին ուղևորվեց դէպի Էջմիածին:

—

«Արձագանք» շաբաթաթերթում կարդում ենք: «Մեզ գրում են Կ. Պոլսից հետևեալը: Պետերբուրգ և Մոսկվա բնակող քանի մը նշանաւոր ազգայիններ տեղւոյն եկեղեցական դասուն հետ, նամակ մը գրած են սրբազան պատրիարք հօր, չնորհաւորելով նրա վերադարձն յաթոռ պատրիարքական, խնդրելով, որ ո և է պատճառով չը հրաժարի այդ կարևոր պաշտօնէն, մինչև որ ազգը կոչէ զինք Արարատեան Մայր-Աթոռոյ վերա բազմելու, իբրև Հայրապետ ամենայն հայոց»:

—

Մեզ հաղորդում են, որ հոկտեմբերի 1-ին 1883 թուին վախճանվեցաւ Վիեննայում Մխիթարեանների հայ-կաթոլիկների միաբանութեան սրբազան, սրբազան Յակոբ Պոզաջի արքեպիսկոպոսը, իր 75 տարեկան հասակում:

—

Կիրակի, հոկտեմբերի 30-ին, կատարվեցաւ Վանքի մայր եկեղեցու մանկական պարտիզի հանդիսաւոր բացումն: Ս. պատարագից յետոյ թեմիս սրբազան առաջնորդը Վանքի քահանաների հետ միասին, մանկական պարտիզի աշակերտները և աշակերտուհիները իրանց վարժուհիների և բազմաթիւ ժողովրդի ուղեկցութեամբ դիմեցին դէպի Վանքի գաւթին մօտ գտնվող տունը, ուր գտնվում է օր. Մամիկոնեանի նոր հիմնած մանկական պարտէզը: Մանկական պարտիզի դահլիճը գեղեցիկ կերպով զարդարված էր: Պատերի վրա կախված էին կենդանաբանական զանազան պատկերներ, իսկ դահլիճի ճակատին գրած էր Ֆրէօբէլի կիսաբաձանը: Հոգևորականութիւնը մանկական պարտիզի օրհնութեան հանդէսը վերջացնելուց յետոյ, թեմիս սրբազան առաջնորդը մի քանի խօսք խօսեց մանկական պարտէզների նշանակութեան մասին մեր հայերիս մէջ, աւելացնելով թէ որպէս լաւ միջնակարգ ուսումնարաններ ունենալու համար հարկաւոր են լաւ ծիսական դպրոցներ, նոյնպէս լաւ ծիսական դպրոցներ ունենալու համար հարկաւոր և անհրաժեշտ են մանկական պարտէզները: Գովելով մանկական պարտիզի հիմնադիր օրիորդ Մամիկոնեանի եռանդը և աշխատասիրութիւնը, սրբազան առաջնորդը յորդորեց ժողովրդին խրախուսել յարգելի օրիորդին թէ բարոյապէս և թէ նիւթապէս, աւելացնելով որ Վանքի մայր եկեղեցու գաւթում չը կայ յարմարաւոր շինութիւն մանկական պարտիզի համար և եկեղեցին նիւթական միջոցներ չունի, որ կարողանայ օգնել օր. Մամիկոնեանին նրա ծանր և դժուարին գործում: Սրբազան առաջնորդի ատենաբանութիւնից յետոյ մանկական պարտիզի սաները մի գեղեցիկ և պատշաճաւոր երգ երգեցին դաշնամուրի ակompանիմենտով, որից յետոյ օրիորդ Մամիկոնեան խօսեց մանկական պարտէզների նշանակութեան մասին ընդհանրապէս, և մեզ՝ հայերիս համար առանձնապէս. յարգելի օրիորդը չնորհակալութիւն յայտնեց սրբազան առաջնորդին նրա քաջալերիչ խօսքերի համար և յայտ յայտնեց, որ նորին սրբազնութիւնը սրանից յետոյ ևս կը շարունակի իր հովանաւորութիւնը տարածել մանկական պարտիզի վրա, իսկ հասարակութեանը խնդրեց չը խնայել իր բարոյական և նիւթական օժանդակութիւնը մանկական պարտիզի համար: Օրիորդի ճառից յետոյ մանկական պարտիզի սաները էլի մի քանի երգեր երգեցին, որով և վերջացաւ հանդէսը: Ցանկանում ենք օր. Մամիկոնեանցին յաջողութիւն իր օգտաւէտ գործում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Temps» լրագիրն ասում է որ Վարնայից «Daily News» լրագրին գրում են, որ թիւրքաց մինիստրների խորհուրդը Կ. Պոլսում նոր է ընդունել ըէֆորմների պրօէկտը, որոնք պէտք է մտցնվեն Արմենիայում: Այդ պրօէկտը անմիջապէս կը հաղորդվի մեծ պետութիւններին:

—Վառնաւոր հեռագիրը Փարիզից «Post» լրագրին հաղորդում է, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Շալմել-Լակուրի հրաժարականի պատճառը նրա խանգարված առողջութիւնն է:

—Խօսելով չինական դեսպանութեան դոկումենտների մասին, որոնք տպված են Փարիզի մէջ, Շալմել-Լակուր ասդում է, որ այդ դոկումենտները ոչինչ չեն ապացուցանում. հայպէս թէ այնպէս, ասում է մինիստրը, նրանք չեն յայտնում այն, ինչ որ մի ժամանակ կը հաղորդվի, այն է թէ ինչպիսի ազդեցութիւններով առաջնորդվում էր Չինաստանը, ներկայացնելով յայտնի պահանջներ: Մի ժամանակ կը յայտնվի, թէ մի քանի անձինք ինչպիսի ստորեկրեայ աշխատանք էին կատարում Չինաստանին համոզելու համար, որ Ֆրանսիայի դիտաւորութիւնները հիմնաւոր չէին և որ դուք (պատգամաւորները) ոչ կամք և ոչ միջոցներ ունէք նրանց պաշտպանելու համար»: Մինիստրի այդ նշանաւոր խօսքերը առիթ են տալիս «Rappel» լրագրին հետևեալ դատողութիւններ անել.—«ակնարկելով այն գաղտնի ազդեցութիւնների վրա, որոնց գործադրել են մեր դեմ Պեկինի մէջ, Շալմէլ-Լակուր թէ իր և թէ իր ընկերների համար վատ դրութիւն պատրաստեց այն պետութիւնների առաջ, որոնց կարող են վերաբերվել այդ ակնարկութիւնները: Կարելի էր մտածել, որ Դեղին գրքի մէջ այդ խօսքերը մտել են խմբագրի ուշադրութեան պատճառով: Բայց երևում է որ այն ենթադրութիւնը ճիշտ չէ: Դրանով մինիստրութիւնը կորցնում է իր յինակէտը արտասահմանում»: Կարդալով այդ դատողութիւնները, ասում է «Republique Française» լրագիրը, կարելի է մտածել, որ այդ բոլորը երազում ևս կարդում: Ի՞նչը է եղրակացնում «Rappel» լրագիրը, որ մինիստրը խօսել է մի քանի պետութիւնների մասին: Նա խօսել է մի քանի անձնաւորութիւնների մասին, որ մեծ զանազանութիւն է կազմում: Բացի այդ, մինիստրը չէ ասել, որ այդ գաղտնի թշնամական գործողութիւնը այժմ էլ շարունակվում է: Թող հանգստանայ «Rappel» լրագիրը: Զարիքը գործված է, արդէն միջոցներ են գործադրված նրանց առաջն առնելու համար: Ցիչեալ անձնաւորութիւնները այլ ևս չեն կարող վնասել Ֆրանսիային Չինաստանի մէջ, զուցէ այն պատճառով, որ նրանք անյապաղ կը հեռանան Չինաստանից»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եֆէմերդին (հայոց օրացոյցը) եկող 1884 տարու համար հետևեալ դուշակութիւններն է անում:—Այս տարի, երբ Արեգակը մտնի, մարտի 22-ին, Ոչխարի (Խոյ աստեղատուն) Առաջին աստիճանը, կիշխէ Արեգակը Կշիռ նշանի տակ, որ է Լուսարերի տունը: Առաջիկայ տարին կը լինի ամենառատ, բայց Կշիռի զօրութեան պատճառով դուշակվում է պտղոց ապականութիւն, մարդկային մարմնի հարուած, և պատերազմ, իսկ մեծ առատութիւն՝ ցորենի, ձէթի, գինու, ապրշումի, և այլ ամենայն մրգերի: Զմռան սկիզբը ցուրտ կը լինի, կարկտով հանդերձ, իսկ վերջը բարեհաճոյ. գարունը ցուրտ կը լինի մինչև Ցունիս ամիսը: Կը լինեն սպառնալիքներ անձրևների, կարկտի և չորութեան, կը մեռնեն շատ եղներ: Դիտեցաւ նրան, նստեց և ցանկապատի միջով սկսեց իր սև աչքերը փայլեցնել իմ վրա:—Ինչո՞ւ ես թաղնվում դուն, կատա,—ձայն տուի նրան,—կարծեմ, ես ոչինչով չը վիրաւորեցի քեզ,—և այդ խօսքերը ասելու միջոցին ես կանգնեցրի ձիաները: Աղջիկը պատասխան չը տուեց:—Այդ ինչ բաներ ես սարքում,—շարունակեցի ես,—միթէ ես ընկած եմ քո ետևից: Ինչո՞ւ ես փախչում ինձանից, հէնց որ տեսնում ես ինձ:—Կատան այդ ժամանակ ցանկապատի միջով նայեց իմ վրա, ձեռքը տարաւ դէպի աչքերը և խորամանկ կերպով ծիծաղեց: Ա՛խ, այն ինչ երես էր, այն ինչ ատամներ էին, նրանց մօտ ինչ արժէք ունէին սպիտակ մարջանները:—Դուք վերադառնում էք տօնավաճառից, Բալաբան,—ամօթխածութեամբ ասաց նա,—ախ, երանի թէ ես էլ ձեզ նման կարողանայի թափառել լոյս աշխարհում:—Բայց քեզ ուրիշ վայելուչ կը լիներ զբօսանքներ կատարել և ոչ թէ շրջմոլիկի նման թափառել:—Ես խօսում եմ միայն տօնավաճառի մասին, բայց ինչ չէի տալ, նրա համար միայն, որ տեսնեմ մի որ և իցէ քաղաք, սև ծովը, իսկ ամենից առաջ ես կը ցանկանայի լինել Կալօմէայում:—Դու դեռ ոչ մի անգամ չես եղել այնտեղ:—Ոչ մի անգամ: Ես դեռ ոչ մի քաղաք չեմ տեսել.—(այժմ նա վստահութեամբ նայում էր իմ աչքերի մէջ)—ճշմարիտ է, որ Կալօմէայում պարտէզները մեռ են դալիս արկղների մէջ, որ դրած են չորս անիւների վրա, և թէ այնտեղ կայ տուն, լցված զինուորներով:—Ես բոլորը բացատրեցի նրան,—այդ ժամանակ նա ոչ մի բանի մասին հասկացողութիւն չունէր: Ես ակամայ ծիծաղում էի, պատասխանելով նրա միամիտ հարցերին, որոնք իսկապէս յիմարութիւններ էին, և նա, կարծես թէ, վախենում էր և հաւի նման թաղցնում էր գլուխը թևքի տակ: Արեգակը խոն արևվում էր դէպի իր մուտքը: Ահա և այս բոպէում, կարծես, տեսնում եմ իմ առջև այն փողոցը, այն ցանկապատը և նոյն գեղեցիկ աղջիկը: Նրա մութ կողմում երկինքը տարածվել էր, ինչպէս մի կարմիր շալ: Այլ ևս ես չը կարողացայ նայել դէպի այդ կողմը,—մի ձեռքով բռնեցի բարձած սայլակը, միւսով զարկեցի մտրակը գետնի աւազներին, և շարունակեցի իմ ճանապարհը: Հետևեալ կիրակին հանդիպում եմ իմ Կատերինային եկեղեցում,—ներեցէք, որ ասում եմ իմ Կատերինա,—այսպիսի յիմար սովորութիւն ունեմ ես: Ես աղօթում էի և երբեմն նայում էի նրա վրա: Ժամերգութիւնը վերջանում է, ժողովուրդը եկեղեցուց դուրս է դալիս. օրհնած ջրի աւազանի մօտ տիրում է սարսափելի իրարանցում. ես բազմութիւնը ճեղքելով մօտենում եմ և ափերիս մէջ տալիս եմ տուրը ջուրը իմ գեղեցիկ Կատերինային: Նա ժպտում է, մատները թաթախում է իմ ափերի մէջ, երեսը խաչակնքում է, յետոյ ջուրը սրսկում է իմ երեսին ու փախչում է: Այդ օրից ես ակամայ միշտ մտածում էի նրա վրա: Այդ ինչ դժբախտութիւն էր: Ես աշխատում էի իմանալ, թէ որտեղ կարող եմ հանդիպել նրան, բայց այնպէս, որ դա ունենար իբր պատահմամբ հանդիպելու ձև: Ա՛խ Ցէր Աստուած, սիրահարական պատմութիւն,—ինչպէս և բոլոր այդպիսի...

(Կը շարունակվի)

—Դա սիրային պատմութիւն է, մէջ մտաւ թղթէ մարդը կիսաձայն և ամօթխած կերպով, կողքից երկչոտութեամբ նայելով զինուորի վրա:

—Երևի, շատ հետաքրքրական է,—ձայն տուեց Կօլանկօն:

—Ամենևին հետաքրքրական չէ,—նրան պատասխանեց զինուորը,—մի սովորական, համարեա ամեն օր պատահող պատմութիւն է: Եւ որովհետև գարոնը ցանկանում է լսել, ես աւելի յօժարութեամբ կը պատմէի վէնգերեան արշաւանքի մասին: Ահա գնացինք մենք...

—Միթէ կրկին մենք պէտք է քայլ առ քայլ հետևենք քեզ Դուկլայից մինչև Կօշաւա,—ընդմիջեց նրան ծերունին.—այդ կը լինէր եսթներորդ անգամ լսել քեզ: Ես կարծում եմ, որ դու կարող էիր պատմել մեզ մի ուրիշ բան:

—Աւելի լաւ կը լինի, եթէ պատմես մեզ այն պատմութիւնը,—թախանձում էր թղթէ մարդը:

—Ո՞ր պատմութիւնը:

—Այն պատմութիւնը, Կատերինայի մասին, այն երևելի տիկնոջ մասին,—կամաց, բայց յայտնի զզուանքով ասաց թղթէ մարդը:

—Դուք ճանաչում էիք նրան,—հարցրեց Բալաբանը, աչքերը վեր չը բարձրացնելով, և իսկոյն լռեց:

Ոչ ոք չը վստահացաւ խօսել:

—Ես ճանաչում էի նրան,—սկսեց զինուորը, և նրա ձայնը դողդողում էր նոյնպիսի ախորութեամբ, որպէս վերջին հնչիւնը մեր ժողովրդական երգի: Նա կամաց-կամաց բարձրացրեց գլուխը: Նրա դէմքը երևում էր սովորականից աւելի գունաթափ, իսկ նրա աչքերը էին այնպէս մեծ, հանդարտ, որպէս լինում է տեսիլք տեսնողների մօտ:

—Հիմա նա կը սկսէ պատմել,—չչնջաց Մօնդօլը և թեթև կերպով խթեց թղթէ մարդու կողքը:

Բոլորը ընդունեցին այնպիսի դրութիւն, որի մէջ ամեն մէկը յարմար էր համարում պատմութիւնը լսելու համար: Մռայլը, որ միշտ անցուդարձ էր անում յետ ու առաջ, որպէս պահապանի պարտաւորութիւնն էր, կանգնեց և յենվեցաւ իր մանգաղի վրա:

—Ի՞նչպէս պատահեց, որ ես առաջին անգամ հանդիպեցի նրան,—սկսեց Բալաբանը:—Այո, այդ պատահեց այնտեղ, կաղնիների անտառում, որը գտնվում է Ցուլաւայի մօտ: Նա որոնում էր սունկեր, և երկայն սուր փուչը, իմանում էք, մխվել էր նրա ոտի մէջ: Նա նստած էր կոպարի վրա և բարձր ձայնով լաց էր լինում: Հէնց որ տեսայ, որ մի գեղեցիկ աղջիկ նստած լաց է լինում, խրոխտացի նրա վրա: Ես իսկոյն կանգ առի և հարցրի նրանից. ինչ է պատահել, իմ նազելի:

—Նա չը պատասխանեց, կրկին բռնեց փուչը և աւելի սաստիկ սկսեց հեկեկալ: Այդ ժամանակ ես հասկացայ, թէ ինչ էր պատահել իմ թուչնիկի հետ: Ես նստեցի նրա մօտ և ասեցի. սպասիր, ես կօգնեմ քեզ:—Նա զսպարեց լաց լինելուց, հանդիստ կերպով մեկնեց դէպ ինձ իր ոտը և կողքից նայում էր իմ վրա: Ես նոյն բոպէում դուրս քարշեցի փուչը: Երբ վերջացաւ, նա, կարծես թէ, մի առանձին չփոթութեան մէջ ընկաւ, արագութեամբ գլխի թաշկինակը ձգեց իր երեսի վրա, վեր թռաւ և փախաւ, առանց ինձ չնորհակալութիւն յայտնելու: Պատահում էր, երբ դրանից յետոյ նա տեսնում էր ինձ, իսկոյն սկսում էր բոլոր ուժով փախչել ինձանից, կարծես թէ, ես վայրենի գազան լինէի, կամ մի որ և իցէ աւազակ: Բայց ինձ առանձին հաճութիւն էր պատճառում հանդիպել նրան: Միանգամ ես գալիս էի բարձած սայլակով,—ներկայ էի մի ամուրդի մեր հարևանութեան մէջ,—սայլը ծանր էր բարձած, և ես գնում էի ձիաների կշտով: Նա կանգնած էր ցանկապատի ետևում: Բայց հէնց որ նկատեց, որ ես տեսայ նրան,

—Դու դեռ ոչ մի անգամ չես եղել այնտեղ:—Ոչ մի անգամ: Ես դեռ ոչ մի քաղաք չեմ տեսել.—(այժմ նա վստահութեամբ նայում էր իմ աչքերի մէջ)—ճշմարիտ է, որ Կալօմէայում պարտէզները մեռ են դալիս արկղների մէջ, որ դրած են չորս անիւների վրա, և թէ այնտեղ կայ տուն, լցված զինուորներով:—Ես բոլորը բացատրեցի նրան,—այդ ժամանակ նա ոչ մի բանի մասին հասկացողութիւն չունէր: Ես ակամայ ծիծաղում էի, պատասխանելով նրա միամիտ հարցերին, որոնք իսկապէս յիմարութիւններ էին, և նա, կարծես թէ, վախենում էր և հաւի նման թաղցնում էր գլուխը թևքի տակ: Արեգակը խոն արևվում էր դէպի իր մուտքը: Ահա և այս բոպէում,

Մակրիտոս ասում է թէ գինին լաւ և մեռցական կը լինի. տարին աջողակ՝ որթեր ջրելու և պարարտներ պճնելու. կը շատանայ մորեխը, կը գուշակվի պատերազմ: Այս տարում տեղի կունենան պատերազմներ, խառնակութիւններ, հրդեհներ, տարաձայնութիւններ և չարութիւններ, թշուառութիւններ, կրօնքի և կրօնական կարգերի պղտորութիւն, կռուողների մէջ այլ և այլ արտմութիւններ, որովհետև մեծ կցորդութիւն է երևում Զոհալ-ին Մուշթարու հետ, որ տեղի ունեցաւ թիկտեմբեր ամսի 24-ին հրային կենդանակերպի մէջ: Այդ կցորդութիւնները և կամ ծնունդները նշանակում են մեծ վնաս և հաստատ կռիւներ, ցնծալի մարդկանց համար վատթար մահեր: Այս մեռնողը նոյնպէս նշանակում է այլ և այլ ատելութիւն իշխանների մէջ, որով փոփոխվելու են իշխանների իշխանութիւնները: Եւ այդ կը պատահի, նրա համար, որ վերոգրված ծնունդները փոխվում են ջրային եռապատկութիւնից հրային եռապատկութեանը, որ շատ չարավնաս է: Եւ որովհետև Ֆրանսիան գտնվում է Մուշթարու իշխանութեան տակ, այդ պատճառով էլ նա կենթարկվի բազմապատիկ վնասների: Նաև Հրատը գտնվում է երկնքի առաջին տան մէջ, նշան է՝ որ այս տարի մեծ արիւնհեղութիւն կը լինի: Լուսինը մերձենում է Զոհալի մարմնին, որ ցոյց է թէ մեծ Տիկին կը մեռնի, ռամիկների մէջ հիւանդութիւն կընկնի, ջերմութիւնից ու խոնաւութիւնից պատճառուած, գլխացաւութիւն, ծնկացաւութիւն և այլ դորա նման ցաւ: Թագաւորներն և իշխաններ միմեանց դէմ կելնեն և ռամիկ ժողովուրդներ կապստամբվեն:»

* * *

Որպէս յայտնի է, իշխան Բիսմարկ չափից դուրս ատում է լատինական տառերը: Իշխան Բիսմարկի այդ ատելութիւնը երևեցաւ նրա մի կարգադրութիւնից, որ նա արաւ կայսերական ստատիստիկական բիւրօի աշխատանքները տպելու առիթով, որոնք սրանից յետոյ գերմանական տառերով կը տպվեն: Այդ կարգադրութիւնը ցնծուարացնում է մանաւանդ օտարազգիներին, որոնք ընտելացած չեն գոթական տառերին:

* * *

Տասերկու մահվան պատիժներ: Պարիզի դատարանը աւազակների քննութեան գործը շարունակում էր երեք շաբաթ և վերջապէս հոկտեմբերի 18-ին յայտնեց իր դատավճիռը: Մեղադրվածների նստարանի վրա նստած էին 18 աւազակներ: Նրանցից տասերկուսը մահուան պատժի են դատապարտված: Դատավճռի ընթերցանութիւնը մի քանի ժամ տևեց: Աւազակների այդ խումբը կազմակերպվեցաւ 1874 թ-ին. այդ ժամանակից անընդհատ նրանք շարունակում էին կողոպտել բնակիչներին և սպանութիւններ կատարել: Աւազակների խմբի գլխաւոր գործողները Ամօրօզօ ազգանունով հինգ եղբայրներն էին: Նրանց պատկանեալ մէկ պարտիզում գտել են նրանց զոհերի մէկ ամբողջ գերեզմանոց: Խմբի գլխաւորն էր Սալվատօր Ամօրօզօ, որի հրամանով կատարվում էին կողոպտումները, սպանութիւնները և պատանդներ փախցնելը, որոնց անյապաղ սպանում էին, եթէ նրանց համար փրկանք չէին տալիս: Դատարանում նրանք նստած էին երկաթէ վանդակում, շրջապատված զինուորներով: Երիտասարդներից մի քանիսները, լսելով դատավճիռը, լաց եղան. միւսները դունատվեցան, իսկ ամենայամառները արձանի նման անշարժ էին կանգնած, միայն աւազակապետ Սալվատօր Ամօրօզօ սաստիկ հայհոյեց իր կրտսեր եղբօրը, Միքելին, փոքրոգութեան պատճառով, որը լաց եղաւ, լսելով որ իրան դատապարտեցին տասերկու տարի տաժանակիր աշխատանքներին:

* * *

Բուրգը Ամերիկայում: Կենտրօնական Ամերիկայում գտնվել են սկզբնական բնակիչների անյայտացած կուլտուրայի վկայութիւններ: Սօնօրում (Մէկսիկայում) Մագդալինայից դէպի հարաւ սպանիական չորս մղոն հեռաւորութեան վրա, մի կուսական անտառում գտնված է մի բուրգ, որի հիմքը 4,350 ոտնաչափ շրջապատ ունի, իսկ բարձրութիւնը 750 ֆուտ: Բուրգի արտաքին պատերը վերին աստիճանի կանոնաւոր ձևեր ունեցող գրանիտից են շինված: Բուրգից դէպի արևելք և նորա չափ բարձրութեան վրա գտնվում է մի բլուր, որի ներսում գտնվում են հարիւրաւոր դահլիճներ ժայռից, մեծ ջանքով շինած պատերով: Այդ սենեակները ութը ոտնաչափ բարձրութիւն ունեն, պատուհաններ չունեն և միայն մէկ մուտք ունեն: Պատերի վրա կան բևեռագրեր և նկարներ մարդկային ձեռքերով և ոտներով: Ամեն տեղ գտնվում են շատ կոհակաթաղ և զէնքեր: Ցայտնի չէ, որ ժամանակին և ժողովրդին է պատկանում ճարտարապետութեան այդ յիշատակարանը: Կարծում են, որ դրանք հնդկական Մայօս ցեղի նախնիների բնակարաններն են, և որ այդ ցեղը այժմ էլ գտնվում է Սօղօրից դէպի հարաւ և որոշվում է հնդկական ուրիշ ցեղերից իր կապոյտ աչքերով, խարտեաշ մազերով, բարձր բարոյականութեամբ և աշխատասիրութեամբ: Այդ ցեղը ունի գրական լեզու և մաթեմատիկական ու աստղաբաշխական մի քանի տեղեկութիւններ:

* * *

Գրագրութիւն դողի հետ: Վարշավայի «Novo» լրագրում տպված է հետևեալ նամակը. «Պ. դողին, որը անցեալ օրը 12-ի և երկու ժամերի միջոցում կարեց տունս Վերչիովայա փողոցի վրա, № 2, խնդարհարար խնդրում եմ վերադարձնել ինձ մի քանի առարկաներ, որոնք ինձ համար մեծնշանակութիւն ունեն որպէս յիշատակներ և ընծաներ: Փոքրիկ ոսկէ մեդալի համար ես կը վճարեմ աւելի շատ, քան թէ ուրիշները: Մնացած առարկաների համար առաջարկում եմ 10 ռուբլ արծաթ: Պ. դողը կարող է պատասխանել ինձ անանուն նամակով»: Մի քանի օրից յետոյ նոյն լրագրին ուղարկվեցաւ դողի նամակը. «Ողորմած պարոն, ես հինգ տարի արդէն պարապում եմ այդ արհեստով և իմ գործունէութեան ընթացքում դէպք չեմ ունեցել, որ ինձանից յետ պահանջէին առարկաները և դրանց փոխանակ փող առաջարկէին ինձ: Ես այնքան պարզամիտ չեմ, որ հաւատամ ձեր խօսքին, թէ դուք իսկապէս փող կը վճարէք առարկաների համար:»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 հոկտեմբերի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ պետական խորհուրդը արդէն երկու նիստեր նուիրեց համալսարանական նոր կանոնագրութեանը: Կանոնագրութիւնը մերժելու մասին լուրը ճիշդ չէ: Գրեթէ 150 յօդուածներից, ինչպէս ասում են, դեռ ևս միայն վեց յօդուածներ են քննված: Լուր է տարածված, որ բանտային վերանորոգութեան ժամանակ ենթադրված է բանտային զործարաններ կազմել Ս. Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի, Կիևի, Օդէսսայի, Կազանի, Ռիգայի և Նիժնի-Նովգորոդի մէջ: Գործարանների եկամուտների մի մասը տրվում է կալանաւորներին, երբ նրանք լրացնում են կալանաւորման ժամանակամիջոցը, իսկ միւս մասը աւելցվում է բանտային դրամագլխին: Գումարատէրերի մի ընկերութիւն Ֆրանսիական նշանաւոր ընկերութիւնների մասնակցութեամբ մտադիր է գալնանը Նիկոլաևի մէջ մի ահագին գործարան կազմել հեռաւոր ծովերը այցելող նաւեր կառուցանելու համար:

ԲԵԼԳՐԱԴ, 28 դեկտեմբերի: Զօրքերը գրաւեցին ապստամբների գլխաւոր բոլոր դիրքերը: Զեստոբրոդիցայի և կալաֆատեան բարձրութիւնների մօտ ապստամբները մասամբ շրջապատված են և մասամբ ցրվել են: Ասում են, որ հանգստութիւնը շուտով կը վերականգնվի:

ՓԱՐԻԶ, 28 հոկտեմբերի: Ծովային մինիստրը օրինագիծ առաջարկեց 9 միլիոն ֆրանկ նշանակելու մասին ցօնկինի արշաւանքի համար: Շալմել-Լակուր արձակուրդ ստացաւ և արտաքին գործերի մինիստրութիւնը ժամանակաւորապէս կառավարում է Ֆերրի:

ՕԴԷՍՍԱ, 28 հոկտեմբերի: Ծովային մինիստրութեան կառավարիչը ուղևորվեցաւ Նիկոլաև: Գեներալ-նահանգապետի վարչութեան մէջ ստացված է մինիստրութեան առաջարկութիւնը կամաւոր նաւատորմի հետ նախկին զներով պայման կապելու մասին, եկող գարնանը գաղթական 500 ընտանիքներ Ուսուրեան երկիրը տեղափոխելու համար:

ՎԻԵՆՆԱ, 28 հոկտեմբերի: Աւստրիական պատգամաւորների ժողովի բիւդժետային մասնաժողովի մէջ արտաքին գործերի մինիստրը, պատասխանելով Սերբիայի մէջ ծագած յուզմունքների վերաբերեալ հարցին, յայտնեց, որ այդ անկարգութիւնները միայն տեղական բնաւորութիւն ունէին և արդէն ճնշված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 հոկտեմբերի: Թագաւոր կայսրը յայտնում է իր բարեհաճութիւնը Կաուլբարս և Սօբոլեվ գեներալներին նրանց առած առանձին յանձնարարութիւնների համար: Կաուլբարս նշանակված է հեծելազօրքի 1-ին զօրաբաժնի առաջին բրիգադայի հրամանատար, իսկ Սօբոլեվ հեռևակների 37-դ զօրաբաժնի առաջին բրիգադայի հրամանատար: Գեներալ Լէսօվոյ և պօրուչիկ Պոլդիկով նորից ռուսաց ծառայութեան մէջ են նշանակված: Առաջինը կցորդված է արտիլերիական գլխաւոր վարչութեանը, իսկ վերջինը վերադառնում է լէյբ-գվարդիայի եղերների գունդը: „Հավասի“ ընկերութիւնը հաղորդեց, որ նորերումս ռուսաց արշաւանքը դէպի Տաջինի ափերը բարձրացրեց Պարսկաստանի անբաւականութիւնը, որը իբր թէ յայտնեց իր իրաւունքները Մերվի վերա: Բայց այդ բոլորը խիստ չափազանցրած է և „Journal de St. Petersbourg“ այդ առիթով ասում է, թէ գործը վերաբերում է հետազօտութիւններին Տաջիում, որը սկսված է աւազակութիւնը ատնապատի մէջ ոչնչացնելու նպատակով: Այդ նպատակին ձգտում է նոյնպէս և Պարսկաստանը: Իսկ Մերվի գրաւելը աչքի առաջ չունեն ոչ Ռուսաստանը և ոչ էլ Պարսկաստանը: Երէկ Ս. Պետերբուրգի քաղաքագլխի օգնական ընտրվեցաւ քուէարկված միակ կանդիդատ Սեմեվսկի: „Մինին“ շոգենաւը Գիբրալտարի մօտ իր վընասված մասերը կարկատելուց յետոյ հոկտեմբերի 25-ին աջողութեամբ հասաւ Նէապոլ:

ՍԱՄԱՐԱ, 29 հոկտեմբերի: Նաւագնացութիւնը դադարեցաւ: Դեռ ևս ձիւն չը կայ:

ԿԱԶԱՆ, 29 հոկտեմբերի: Ճանապարհորդական նաւագնացութիւնը Կազանի և Նիժնի-Նովգորոդի մէջ դեռ ևս շարունակվում է:

ՐԻԳԱ, 29 հոկտեմբերի: Այսօր հանդիսով տօնվեցաւ Լիւտերի ծննդեան չորս հարիւրամեակը. առաւօտը աւետարանականների բոլոր եկեղեցիները լիքն էին աղօթողներով, երեկոյեան ճրագալոյց կար: Բալտեան մնացած քաղաքներն էլ այդ օրը մեծ հանդիսով տօնեցին:

ՄՕԳԻԼԷՕՎ-ՊՕԴՕԼՍԿԻ, 30 հոկտեմբերի: Անգլիական գումարատէրերի ընկերութիւնը մտադիր է եկող տարի Պոդոլսկի նահանգի մէջ շաքարի հինգ գործարաններ կառուցանել:

ՓԱՐԻԶ, 29 հոկտեմբերի: Այսօր ստորագրված է հրամանը գեներալ Ապպէրին Ս. Պետերբուրգի մէջ դեսպան նշանակելու մասին:

ԲՐԻՍԷԼ, 29 հոկտեմբերի: „Nord“ լրագիրը հերքում է Փարիզի կոմսի աղջկայ առաջիկայ ամուսնութեան լուրերը:

ԼՕՆԴՕՆ, 29 հոկտեմբերի: Լօրդ Մէրի բանկէտի ժամանակ Ֆրանսիական դեսպան Վադինգտոն յայտնեց, որ նրան տրված յանձնարարութեան նպատակն է ամրացնել խաղաղ յարաբերութիւնները երկու ազգութիւնների մէջ: Գլադստոն մի ճառ արտասանեց, որով ասեց, թէ Ֆրանսիական շահերը ոչ ոքի համար այնքան արժէք չունեն, որքան Անգլիայի համար: Մադագասկարի տարաձայնութիւնները աջողութեամբ վերջացրած են և յոյս ունի, որ Սուէզի ջրանցքի հարցն էլ ընդհանուր շահերի համեմատ կը վճռվի: Անգլիական զօրքերի մի մասը շուտով կը թողնէ Եգիպտոս, իսկ վերջնականապէս զօրքերի հեռանալը երկրի աջողութիւններից է կախված: Անգլիայի ինքնավարութիւնը համամիտ է մեծ պետութիւնների անկասկածելի ցանկութեանը խաղաղութիւնը պահպանելու մասին, իսկ Անգլիայի գլխաւոր նպատակը Բերլինի դաշնագրի պահպանելն է: Այդ նպատակին ձգտում են և միւս պետութիւնները և պէտք է յուսալ, որ բալկանեան թերակղզու կառավարութիւնները կը հետևեն այդ օրինակին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 հոկտեմբերի: Արտաքին գործերի մինիստրը այսօր ուղևորվում է արտասահման: „Journal de St. Petersbourg“ լրագիրը հերքում է Լօնդօնի մէջ հրատարակվող լրագիրների լուրերը Պսկովի մէջ եղած հեռևակների 37-դ զօրաբաժինը կազմակերպելու և 1877 թուականի պահեստի զօրքերը ծառայութեան հրաւիրելու մասին:

ՍՕՖԻԱ, 30 հոկտեմբերի: Այստեղ հասաւ գնդապետ Կաուլբարս:

ԲԵԼԳՐԱԴ, 30 հոկտեմբերի: Ապստամբութիւնը ճնշված է համարվում: Ապըստամբները ամեն տեղ յաղթված են: Մնացածները անցան բոլգարական սահմանից: Խաղաղ բնակիչներից զէնքերի վերցնելը այժմ կատարելապէս կանոնաւոր է կատարվում:

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 30 հոկտեմբերի: Բումինական մինիստր-նախագահ Բրատիանո, պատասխանելով պատգամաւորների ժողովի մէջ նրան առաջարկած հարցին, յայտնեց, թէ նա խորհուրդ տուեց բումինական թագաւորին այցելել Վիեննա Աւստրիային համոզելու համար, որ Բումինիան կարգապահութիւն և հանգստութիւն է ցանկանում: Իսկ ինքը Բրատիանօ ուղևորվեցաւ Գաշտէյն վաւերացնելու համար, որ երկիրը կատարելապէս բաժանում է իր թագաւորի զգացմունքները: Նա իր վրա պաշտօնական ոչինչ պարտականութիւն չէ վերցրել: Դանուբեան հարցի վերաբերութեամբ Բրատիանօ ասաց, որ բումինական թագաւորը և կառավարութիւնը միակերպ հաստատամտութեամբ կը պաշտպանեն Բումինիայի շահերը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 93 ր. 75 կ., հինգերորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 218 ր., երկրորդ 208 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 37 կ., երրորդ 91 ր. 25 կ., ոսկի 8 ր. 40 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $23^1/_2$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ $199^1/_2$ մարկ, Փարիզի վրա $246^1/_2$ ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒ

MINGRÉLIE (ՄԻՆԳՐԵԼԻԱ)

«Ն. ՊԱԿԷ և ԸՆԿ.» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ **MINGRÉLIE** (ՄԻՆԳՐԵԼԻԱ) որի նաւապետն է **NEL** (ՆԷԼ), հասաւ ՓՕԹԻ, հինգշաբթի 27-ին հոկտեմբերի։ Դուրս կը գայ ՓՕԹԻԻՑ երեքշաբթի, նոյեմբերի 1-ին, իսկ Բաթումից հինգշաբթի 3-ին նոյեմբերի, եթէ եղանակը բարեյաջող կը լինի ճանապարհորդութեանը։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագենտներին՝ ՓՕԹԻՈՒՄ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Հէքիմեանցին, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԲԸՆՕԻՆ, Արծրունու Գալերէա № 194.

Съ 1-го января 1884 г. начнетъ выходить при редакціи „ТЕХНИЧЕСКАГО ОБЗОРА“, въ С.-Петербургѣ, Троицкій пер., № 40, сельско-хозяйственный журналъ: „ПРОГРЕССИВНОЕ СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО“, еженедѣльный журналъ новѣйшихъ открытій и усовершенствованій въ сельскомъ хозяйствѣ и кустарныхъ производствахъ, съ безплатнымъ приложеніемъ еженедѣльной общественной и литературной газеты „РОДИНА“, по нижеслѣдующей программѣ:

1) **Правительственныя распоряженія и узаконенія**, относящіяся къ сельско-хозяйственной и кустарной промышленности.
2) **Полеводство.** 3) **Лѣсоводство.** 4) **Садоводство.** 5) **Скотоводство.** 6) **Пчеловодство.** 7) **Рыбоводство.**
8) **Сельско-хозяйственные рецепты и наставленія.**
9) **Патенты по сельскому хозяйству**, какъ русскіе, такъ и иностранные, съ пояснительными политипажами.
10) **Сельско-хозяйственная механика**, съ пояснительными чертежами.
11) **Сельско-хозяйственная строительная архитектура**, съ пояснительными чертежами и планами.
12) **Кустарныя производства.**
13) **Спортъ и охота.**
14) **Домашнее сельское хозяйство, находящееся въ веденіи хозяекъ.**
15) **Сельско-хозяйственная библіографія** на русскомъ, польскомъ, нѣмецкомъ, французскомъ и англійскомъ языкахъ.
16) **Телеграммы съ торговыхъ рынковъ**, главнѣйшихъ городовъ Россіи и иностранныхъ государствъ, о торговлѣ сельско хозяйственными продуктами.
17) **Торговая корреспонденція.**
18) **Вопросы и отвѣты** по всѣмъ отраслямъ сельскаго хозяйства и кустарной промышленности.
19) **Экономическій отдѣлъ**, въ которомъ будутъ помѣщаться:
а) Статьи, касающіяся нуждъ и улучшеній сельскаго хозяйства и кустарной промышленности.
б) Статьи, могущія имѣть соприкосновеніе съ экономическою жизнью сельскихъ хозяевъ, сельскихъ хозяекъ и кустарныхъ производителей.
в) Статьи, имѣющія цѣлью способствовать развитію сельско-хозяйственной и кустарной промышленности и сдѣлать ихъ болѣе производительными и болѣе выгодными.
20) **Смѣсь.** 21) **Объявленія.**

Въ газетѣ „**Родина**“ будутъ помѣщаться: Современныя событія; общественныя дѣла; отечественная исторія; науки, искусства и художества; изящная словесность: романы, повѣсти, разсказы и стихотворенія; критика; обзоръ журналовъ по всѣмъ отраслямъ знанія; иностранная хроника; столичная и провинціальная жизнь; новѣйшія заграничныя извѣстія и проч. и проч.

По мѣрѣ надобности, къ журналу „Прогрессивное Сельское Хозяйство“ будутъ прилагаться чертежи и планы.

Журналъ будетъ выходить еженедѣльно.

Подписная цѣна на журн. „Прогрессивн. сельское хозяйство“, съ прилож. газеты „Родина“, 4 Р., съ пер. 6 Р. на 1 годъ.

Достойно удивленія, что въ Россіи, странѣ по преимуществу земледѣльческой, не имѣется ни одного частнаго сельско-хозяйственнаго журнала, хотя, какъ всякому практику извѣстно, въ настоящее время, когда природная плодотворность земли уже истощена, земледѣліе можетъ процвѣтать лишь при условіи веденія его на основаніи научно-практическихъ данныхъ, и поэтому, появленіе каждаго новаго изданія, способствующаго этой цѣли, должно быть встрѣчено съ полнымъ сочувствіемъ.

ԳԼՈՒԽՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։



Միակ գործակալ **ԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ** տեղը կան ամենրի համար մեծ **ԳՐԻՉՆԵՐ** էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱԲ-ՆԵՐ, զմուռ, ՄԱՐԻՉՆԵՐ, պենալ, ՆԵՐ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, ՆԵՐ, ԲԱԶԿԱԹՈՌ-բարկու կախելու ՏԻՆՆԵՐ, անոտներ, լուծիւն **ԱՆԳԱՆՈՒԹ։** Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ։ Կան Թուղթ, տետրակ-ՏԻՏՆԵՐ, քարեգ-ԳՐՉԱԿՈԹ, քսակ-ամաններ, ՄԿՐԱՏ-ՐՈՑՆԵՐ, խալիչա-ՄԱՀՃԱԿԱԼ, վե-համար իրեր, ԳՕ-ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐ-ՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, Ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտակալեի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենտօշներ։ Բժշկական թուղթ վատերկլօզետի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

87—100

Թիֆլիսի քաղաքացին վարչութիւնը՝ նոյեմբերի 4-ին ածուրդ նշանակելով դիդուբի կղզու վրա ջրանցքի ֆիլտրաների համար հարկաւոր հողային աշխատանքները կապալով տալու համար, հրաւիրում է այդ աշխատանքները վերցնել ցանկացողներին ներկայանալ ածուրդին առաւօտեան 12 ժամին։ Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 10—2 ժամը։

1—3

Կանանց ձմերային վերարկուներ, տղամարդկերանց գլխարկներ և այլն ծախվում են էժան գներով։ ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ, Արծրունու գալերէա։

9—12

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

40—50

Դուրս եկաւ մամուլի տակից Վաղարշապատում տպագրված եղնիկ քահանայ Եր ընկեանցի նոր աշխատասիրութիւնը՝ „Ձայնագրեալ ազգային երգարան։“ Վաճառվում է Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցում։ Գինն է 80 կոպէկ։ Մ և նոյն տեղը վաճառվում են նոյն հեղինակի հետևեալ աշխատասիրութիւնները։

1. Մանկական երգարան առանց նոտաների . . . . . 20 կոպ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան . . . . . 40 կոպ.
3. Դասագիրք հայկ. Ձայնագրութեան . . . . . 30 կոպ.
4. Խմբական ձայնագրեալ երգարան . . . . . 50 կոպ.

10—10

ՄՕՍԿՎԱՑԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՈՒՍԱՆՈՂ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ԴԱՍԵՐ ՌՈՒՍ և ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ։

ՀԱՍՑԷՆ ՀԱՐՑՆԵԼ „ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

2—5

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍ** ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱ-ՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՑԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

74—100

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՔՅԵՍԿԱՑԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՑԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաշելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամօվարներ։ Ջեմոդանները 2 ր. 75 կ.—26 ր., սակվոյաժ ձեռքի և ոտից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամօվարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ութոներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՑԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մեսաչների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի դգալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի դգալներ ֆրաժէյի, մելխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՑԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պղպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրօններ րէվօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 Ֆ. ԹԷՑ Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամբի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիտներ, գրչակոթեր, սուրգուչ, փոստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

72—100

ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ածվում հետևեալ դիպվածներում։ ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՅԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ։

Պէպսին „Բուդօ“ ճանաչված է Փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ՓԱՐԻԶԻ աշխարհանդիսում 1867 թ. ՎԻԵՆՆԱՑԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻԶԻ 1878 թ.։

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման։

Դէպօ Շահ-Պարոնեանցի, և ԳրիմՇակի այլ դեղատներում։

ՇՕԿՕԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Գտնվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ հետևեալ մագազիններում։ Գ. Մ. կօպաձէի, Ս. Անիեվի, Ա. Պ. Ակօպօվի, Վ. Ֆ. Սիտօվի, Ե. Ա. Եղիազարօվի, Գ. Ա. Բաեաղչեվի, Ս. Ա. Ծովիանօվի, Ց. Ա. Բաբանօսօվի, Ց. Ի. Գուրգենօվի, Ի. Ա. Եւանգուլօվի և ուրիշ շատերի մագազիններում, նոյնպէս և ԿՈՎԿԱՍԵԱՆ երկրի միւս բոլոր քաղաքներում։

17—24 (1—15)

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Октября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.